ԳՅՈՒՄՐՈՒ ՄՈՐ ԵՎ ՄԱՆԿԱՆ ԱՎՍՏՐԻԱԿԱՆ ՀԻՎԱՆԴԱՆՈՑ
ÖSTERREICHISCHES MUTTER KIND ZENTRUM

***Արձանագրություն N 3***

***«ՇՄԳՄՄԱՀ-ԳՀԱՊՁԲ-18/16-2» ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնում կատարելու ընթացակարգի հանձնաժողովի հայտերի գնահատման նիստի***

ք. Գյումրի 29 դեկտեմբերի 2017թ., ժ 16:30

Մասնակցում էին՝

***Հանձնաժողովի նախագահ՝*** ***Կարեն Հմայակյան***

*Գնման պատասխանատու/Գնահատման Աշխատակազմի պատասխանատու-ԳՊ/ԳԱՊ*

***Անդամներ՝***

*Գնման պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ-ԳՊ/ԳԱ* ***Սիրուշ Պողոսյան***

***Լիլիթ Հովհաննիսյան***

*Գնման պատասխանատու/Բացման Աշխատակազմ-ԳՊ/ԲԱ* ***Անահիտ Մելքոնյան***

***Կարեն Ասատրյան***

***Հանձնաժողովի քարտուղար՝*** ***Նվարդ Բադալյան***

*Գնման պատասխանատու/Մրցույթի համակարգող-ԳՊ/Միմ*

1. ***Ընդունել ի գիտություն***

ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի/Կարգ/ 43-րդ կետի 3 և 4 ենթակետերի համաձայն էլեկտրոնային փոստի միջոցով ՀՀ Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե 25.12.2017թ. հարցում է ուղարկվել առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակիցների անվանումները և հարկ վճարողի հաշվառման համարը /կցվում է/:

Գնահատող հանձնաժողովի 25.12.2017թ. թիվ 2 որոշմամբ էլեկտրոնային փոստի միջոցով նիստին հաջորդող աշխատանքային օրը առաջին տեղ զբաղեցրած բոլոր մասնակիցներին ծանուցվել է՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստով ներկայացնել Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի "զ" պարբերությամբ սահմանված առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը/հավելված 6 և 6.1/ /կցվում է/:

2. ***Հանձնաժողովն արձանագրեց***

Կարգով սահմանված ժամկետում Կոմիտեից առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ ստացվել է դրական եզրակացություն, բացառությամբ <<Սիտի սայնս>> ՍՊԸ /կցվում է/: Սահմանված կարգով տեղեկացվել է ՀՀ Ֆինանսների նախարարություն՝ նշված մասնակցի ընթացակարգին մասնակցության վերաբերյալ:

Ընկերությունների կողմից սահմանված ժամկետում էլեկտրոնային փոստով ներկայացվել են պահանջվող փաստաթղթերը /կցվում են/:

Ներկայացված փաստաթղթերը գնահատման թերթիկի հետ միասին հանձնաժողովի քարտուղարի կողմից տրամադրվել են հանձնաժողովի անդամներին գնահատելու համար:

***3. Հանձնաժողովը որոշեց***

***Հիմք ընդունելով վերոգրյալը՝***

***1-ին տեղ զբաղեցնող և փնփեսապես շահավետ գնային առաջարկ ներկայացրած մասնակից ճանաչել***

թիվ 3, 13, 25, չափաբաժինների մասով՝ <<Հերմինե Ֆարմեց>> ՍՊԸ –ին

թիվ 9, 27, 34, 35, 41 չափաբաժինների մասով՝ <<Մեդտեխսերվիս>> ՍՊԸ –ին

թիվ 20, 22, 40 չափաբաժինների մասով՝ <<Թագ Հէմ>> ՍՊԸ –ին

թիվ 1, 5, 16, 55 չափաբաժինների մասով՝ <<Լեյկոալեքս>> ՍՊԸ –ին

թիվ 6, 12, 15, 21, 29, 42, 47, 48, 49 չափաբաժինների մասով՝ <<Մեդիտեք>> ՍՊԸ –ին

թիվ 10, 18, 24, 26, 28, 31, 33, 36, 37, 38, 39, 44, 50, 51 չափաբաժինների մասով՝ <<Լևոն և Լամարա>> Դեղատուն ՍՊԸ –ին

թիվ 2, 4, 7, 8, 11, 14, 17, 19, 30, 43, 53, 54 չափաբաժինների մասով՝ <<Նատալի Ֆարմ>> ՍՊԸ–ին

թիվ 52 չափաբաժինների մասով՝ <<Դելտա>> ՍՊԸ–ին

Թիվ 23, 32, 45, 46 չափաբաժինների մասով ոչ մի հայտ չի ներկայացվել, հետևաբար Գնումների մասին ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետի համաձայն այն համարվում է չկայացած:

***Որոշումը ընդունվել է՝ կողմ 5, դեմ՝ 0***

**3.1** Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը/կցվում է/:

***Որոշումը ընդունվել է՝ կողմ 5, դեմ՝ 0***

**3.2** Ամփոփման նիստը հրավիրել պայմանագրեր կնքելուն հաջորդող աշխատանքային օրվա ժամը 16:30ին:

***Որոշումը ընդունվել է՝ կողմ 5, դեմ՝ 0***

Հանձնաժողովի ՝

| | |
|---|---|
| Նախագահ՝ | Կարեն Համայակյան |
| Անդամներ՝ | Սիրուշ Պողոսյան |
| | Լիլիթ Հովհաննիսյան |
| | Անահիտ Մելքոնյան |
| | Կարեն Ասատրյան |
| Հանձնաժողովի քարտուղար՝ | Նվարդ Բադալյան |